այլ որպէս ես գիտեմ՝ զի ոչ դու և նոյն գունակ ոչ ամենայն մարդ, որ 'ի բնութենէ մարդոյ ոչ ոք կարէ առնել զայն որ իցէ ընդ դէմ բնական բնութեան մերոյ, ոչ թէ 'ի պատճառէ յանդգնութեան և կամ ապստամբութեան հրամանի կայսեր, այլ միմիայն 'ի պատճառն ընդ դէմ բնութեան մերոյ լինիլն, որ զամենայն հրաման և պատուէր և Օրէնք և այլ զոր ինչ որ ընդ դէմ բնութեան մերոյ ոչ երբէք կարէ մնալ 'ի մէնջ մեր և ոչ կարէ հաստատիլ 'ի տեղի իւր՝ եթէ ոչ սայ միայնակ, ընդ դէմ բնութեան հրամանս պատճառ լինիցի քակելոյ, աւերելոյ Շինութիւնս մեր և աղտեղեցուցանելոյ մաքրութիւնս մեր, լծորդելոյ ազատութիւնս մեր, նախատելոյ պատիւս մեր և այլն, ուրեմն որպէս ես հաստատեալ 'ի միտս ունենալով, զի զամենայն զոր ինչ ես կամիմ վասն կալոյ և մնալոյ 'ի վերայ հաստատութեան, որ կարէ լինիլ պատճառ ամենայն բարութեան վասն կենաց մերոց 'ի յայսմ աշխարհիս և վասն յաւիտենական հանգստութեան 'ի հանդերձելումն, վասն բնութեան իմոյ, նոյն գունակ հաստատելով 'ի միտս ընթերցողաց ցուցանելով բնական վկայութիւք և ապա ցանկամ զի դուք ևս 'ի վերայ այս մտածութեան հաստատուն լերուք, յետ այսորիկ 'ի միտս ձեր խորհեցարուք վասն շտապաշարժ և փոփոխալի և անհաստատուն այս բնութիւն, որ ոչ տանի և ոչ